# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՄՈՐԻՍ ՊԵՆՆԵՔՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ**
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**
***ՏԻԱՐ ՄՈՐԻՍ ՊԷՆՆԷՔԵԱՆԻՆ***
**ՈՐ Ի ԼԻՈՆ, Ի ՖՐԱՆՍԱ**

Հոգեկան ուրախութեամբ տեղեկացանք Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակի Լիոնի շրջանի Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան Եպիսկոպոս Զաքարեանէն, որ բազում տարիներ օրինակելի հետեւողականութեամբ եւ հաւատարմութեամբ Ձեր ամբողջական եւ անվերապահ մասնակցութիւնը բերած էք Լիոնի մեր Եկեղեցւոյ վարչութեան մէջէն ազգային-եկեղեցական կեանքին: Ձեր սպասարկութեան ընթացքին պարտականութեան եւ համեստութեան առաքինութիւնները եղած են Ձեզ առաջնորդող սկզբունքները Եկեղեցւոյ հանդէպ Ձեր սիրոյն անստուէր սիրովը:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և օգտաշատ ծառայութեանց, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ շք-նշ-նը:**

Կ՚աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ երկար տարիներ պարգեւէ Ձեզի, քաջառողջութեամբ, որպէսզի շարունակէք առաւել օգտակար գործերով Ձեր սէրը արդիւնաւորել ի հաճոյս Աստուծոյ և ի պայծառութիւն Լիոնի մեր Ս. Եկեղեցւոյ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն. եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տուաւ Կոնդակս ի 5 Մարտի*
*Յամի Տեառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԹ*
*ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի*
*Ընդ համարաւ Է/223*